

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել:

Եթե Դուք ամփոփագրին ծանոթանում եք Բանկի կայքում, խնդրում ենք ուշադրություն դարձնել տեղեկատվական ամփոփագրի գործողության ամսաթվին:

Եթե Դուք ամփոփագրին ծանոթանում եք թղթային տարբերակով, մանրամասն տեղեկությունների համար խնդրում ենք այցելել Բանկի ինտերնետային կայք՝ www.idbank.am հասցեով (ուշադրություն դարձնելով տեղեկատվական ամփոփագրի գործողության ամսաթվին), դիմել Բանկի ցանկացած մասնաճյուղ կամ զանգահարել Բանկի Յեռախոսազանգերի կենտրոն՝ (+37410) 59 33 33 , (+37460) 27 33 33 հեռախոսահամարներով:

«ՏՐԱՆՍԵՐ» ՎԱՐԿԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳՐ					
Ընդհանուր պայմաններ					
1.	Հաճախորդների թիրախավորման չափանիշներ	<p>Հաճախորդը վճարային համակարգերով արագ դրամական փոխանցումներ է ստացել Բանկի միջոցով հետևյալ պարբերականությամբ.</p> <p>Տարբերակ 1 – դիմումի ներկայացման ամսվան նախորդող 4 ամիսների ընթացքում յուրաքանչյուր ամիս նվազագույնը 1 անգամ, կամ</p> <p>Տարբերակ 2 - դիմումի ներկայացման ամսվան նախորդող 6 ամիսների ընթացքում նվազագույնը 3 անգամ (նվազագույնը 3 ամիս և յուրաքանչյուր ամիս առնվազն 1 փոխանցում), ընդ որում դիմումի ներկայացման ամսվան նախորդող ամսում առնվազն 1 փոխանցման առկայությունը պարտադիր է, կամ</p> <p>Տարբերակ 3 - դիմումի ներկայացման ամսվան նախորդող 12 ամիսների ընթացքում 6 փոխանցումների առկայություն (նվազագույնը 6 ամիս և յուրաքանչյուր ամիս առնվազն 1 փոխանցում), ընդ որում դիմումի ներկայացման ամսվան նախորդող վերջին 2 ամիսների ընթացքում առնվազն 1 փոխանցման առկայություն:</p>			
2.	Արժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	ՌԴ ռուբլի	Եվրո
3.	Վարկի նվազագույն գումար	100.000	200	15.000	200
4.	Վարկի առավելագույն գումար	1.500.000	3500	200.000	3500
		<p>Հաճախորդին տրամադրվող վարկի առավելագույն գումարը չի կարող գերազանցել վերջին 12 ամիսների ընթացքում ստացած փոխանցումների հանրագումարը*</p> <p>*Ամսական փոխանցման գումար է համարվում տվյալ ամսվա ընթացքում բոլոր արժույթներով ստացված փոխանցումների հանրագումարը՝ արտահայտված պահանջվող վարկի արժույթով, ընդ որում, փոխարկումների հաշվարկն իրականացվում է Բանկի տվյալ պահին գործող տվյալ արժույթի առջի փոխարժեքով:</p>			
5.	Տարեկան անվանական տոկոսադրույք	21.5%	19%		

6.	Տարեկան փաստացի տոկոսադրույք ¹	23.75%	20.75%
7.	Վարկի տրամադրման առավելագույն ժամկետ (ամիս)	36	
8.	Վարկի տրամադրման նվազագույն ժամկետ (ամիս)	12	
9.	Վարկի տրամադրման միանվագ վճար (պայմանագրային գումարից)	չի սահմանվում	
10.	Բանկային հաշվի բացման վճար	չի սահմանվում	
11.	Վարկի տրամադրման եղանակ	անկանխիկ՝ վճարային քարտի միջոցով	
12.	Վարկի և տոկոսագումարների մարման ձևը	անուիտետային՝ վարկի մայր գումարի և տոկոսագումարի հանրագումարի ամսական հավասարաչափ մարումներ	
13.	Ապահովվածությունը	դրամական հոսքեր (փոխանցումներ)	
Վարկառուի նկատմամբ պահանջներ			
14.	Կարգավիճակը	ՀՀ քաղաքացի ֆիզիկական անձ	
15.	Տարիքային սահմանափակումը	վարկառուի տարիքը վարկի դիմումի ընդունման օրվա դրությամբ չպետք է 21 տարեկանից պակաս լինի և մինչև վարկի մարման վերջնաժամկետը չպետք է գերազանցի 65 տարեկանը	
16.	Վարկառուի վարկային պատմության նկատմամբ պահանջը	<ol style="list-style-type: none"> վարկային պատմության առկայություն վարկ ստանալու դիմումի ներկայացման օրվա դրությամբ վարկառուն պետք է չունենա գործող ժամկետանց/դասակարգված պարտավորություններ (վարկ, վարկային գիծ, օվերդրաֆտ, երաշխավորություն և այլն), վարկ ստանալու դիմումի ներկայացման ամսվան նախորդող 12 (տասներկու) ամիսների ընթացքում վարկառուի ժամկետանց պարտավորությունների գծով օրերի հանրագումարը չպետք է գերազանցի 30 օրը, ընդ որում վերջին երեք ամիսների ընթացքում յուրաքանչյուր ուշացում ոչ ավել քան 5 օր: վարկի տրամադրման պահին նախորդող 12 ամսվա ընթացքում վարկի առավելագույն դաս՝ հսկվող (բացառությամբ երաշխավորության), 	
Վճարային քարտ			

¹ ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ Է ՎԱՐԿԻ ՓԱՍՏԱՑԻ ԼՆԱՑՈՐԴԻ ՆԿԱՏՄԱՄԲ, ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՀԱՃԱՆՈՐԴԻ ՀԱՄԱՐ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ԵՎ ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՁՈՒՄ:

Սույն փաստացի տոկոսադրույքները հաշվարկված են՝ հաշվի առնելով Transfer քարտի սակագները: Այլ քարտով վարկ ստանալու դեպքում նշված փաստացի տոկոսադրույքները կարող են փոփոխվել:

17.	Վճարային քարտի տեսակ	<ul style="list-style-type: none"> ➤ ID-Transfer վճարային քարտ՝ համաձայն Բանկի գործող սակագների՝ հետևյալ հղմամբ՝ Transfer քարտի տեղեկատվական ամփոփագիր ➤ Բանկի կողմից թողարկվող այլ քարտատեսակներ (բացառությամբ Visa Classic/Visa Gold դեբետային)՝ համաձայն յուրաքանչյուր քարտի գործող սակագների՝ հետևյալ հղմամբ՝ Քարտերի տեղեկատվական ամփոփագիր
ՏՈՒՅԺԵՐ, ՏՈՒԳԱՆՔՆԵՐ		
18.	Ժամկետանց վարկի գծով, օրական	0.1%
19.	Ժամկետանց տոկոսագումարի գծով, օրական	0.1%
20.	Վաղաժամկետ մարման տույժ	չի սահմանվում
21.	Վարկի վաղաժամկետ մարում կամ լրացուցիչ ապահովման միջոց պահանջելու հիմքեր	<p>Բանկն իրավասու է պահանջել վարկի վաղաժամկետ մարում կամ լրացուցիչ ապահովման միջոց, եթե՝</p> <ol style="list-style-type: none"> 1) հաճախորդը հրաժարվում է վճարային քարտից, 2) վարկի տրամադրումից հետո 6 ամիս անընդմեջ Բանկի միջոցով փոխանցումներ չի ստացել, 3) վարկի ստացման համար ներկայացված տեղեկությունները կեղծ կամ անարժանահավատ են, 4) հաճախորդի էլեկտրոնային փոստի բացակայությունը 5) այլ հիմքեր՝ համաձայն պայմանագրի
Հայտի վերաբերյալ այլ պայմաններ		
22.	Վարկի մերժման գործոնները	<ol style="list-style-type: none"> 1. վարկային պատմության բացակայություն 2. բացասական վարկային պատմություն, 3. փոխանցումների անհրաժեշտ ծավալի բացակայություն, 4. Բանկում առանց գույքային ապահովվածության վարկի առկայություն՝ բացառությամբ աշխատավարձային նախագծերի շրջանակներում ստացված վարկի/վարկային գծի, 5. կեղծ կամ անարժանահավատ տեղեկատվության տրամադրում, 6. այնպիսի տեղեկատվության տրամադրում, որը կասկածի տակ է դնում վարկի վերադարձելիությունը, 7. հաճախորդի էլեկտրոնային փոստի բացակայությունը, 8. այլ գործոններ:
23.	Վարկի տրամադրման դրական գործոնները	<ol style="list-style-type: none"> 1. վարկառուի տվյալների համապատասխանությունը վարկավորման պայմաններին, 2. բավարար դրամական հոսքեր (փոխանցումներ)
24.	Որոշման կայացման առավելագույն ժամկետը	պահանջվող բոլոր փաստաթղթերը Բանկ ներկայացնելուց հետո առավելագույնը 3 աշխատանքային օր

25.	Վարկառուին վարկի վերաբերյալ կայացված որոշման մասին տեղեկատվության տրամադրման ժամկետ	որոշման կայացումից հետո առավելագույնը 1 աշխատանքային օր Բանկը վարկի տրամադրման վերաբերյալ կայացրած որոշման մասին հաճախորդին կարող է տեղեկացնել Բանկի տարածքում, հեռախոսագանգի կամ էլեկտրոնային փոստի միջոցով:
26.	Որոշման վավերականության առավելագույն ժամկետը	10 աշխատանքային օր
27.	Վարկային դիմումի ընդունման վայր	Բանկի բոլոր մասնաճյուղեր
28.	Վարկի ձևակերպման և տրամադրման վայր	Բանկի բոլոր մասնաճյուղեր
Հաճախորդի կողմից ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ և տեղեկատվություն		
29.	անձը հաստատող փաստաթուղթ (բնօրինակ)	
30.	սոցիալական քարտ/հանրային ծառայության համարանիշ/Նույնականացման քարտ/ կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը (առկայության դեպքում) (բնօրինակ կամ էլեկտրոնային)	
31.	հաճախորդի էլեկտրոնային փոստի հասցե	

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Բանկը, նախքան վարկային պայմանագրի կնքումը, հաճախորդին տրամադրում է վարկի էական պայմանների անհատական թերթիկ, որում ներկայացված են հաճախորդին տրամադրվելիք վարկի անհատական պայմանները:
2. Հաճախորդն իրավունք ունի առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծելու վարկային պայմանագիրը՝ դրա կնքմանը հաջորդող 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում (մտածելու ժամանակ)՝ հետ վերադարձնելով իր ստացած վարկի գումարն ամբողջությամբ և վճարելով տոկոսներ, որոնք հաշվարկվում են պայմանագրով նախատեսված տարեկան փաստացի տոկոսադրույքին համապատասխան:
3. Վաղաժամկետ մարման դեպքում համամասնորեն նվազեցվում է վարկառուի վարկավորման ընդհանուր ծախսի մեջ մտնող Բանկի եկամուտը ձևավորող վճարները:
4. Հաճախորդն իրավունք ունի վարկային պայմանագրով ունեցած պարտավորությունները ժամկետից շուտ կատարելու (մարելու)՝ անկախ այն հանգամանքից, թե նման իրավունք վարկային պայմանագրով նախատեսված է, թե ոչ:
5. Վարկի տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Վարկի տոկոսագումարը հաշվարկվում է վարկի փաստացի մնացորդի նկատմամբ:
6. Տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան կարժենա վարկը հաճախորդի համար տոկոսագումարները և այլ վճարները սահմանված ժամկետներում և չափերով կատարելու դեպքում:
7. Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման կարգը ներկայացված է հետևյալ հղմամբ՝ [Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման ուղեցույց](#):
8. Արտարժույթով վարկերի դեպքում փաստացի տոկոսադրույքի հաշվարկի համար հիմք է ընդունվում վարկի տրամադրման պահին ՀՀ ԿԲ պաշտոնական կայքէջում հրապարակված փոխարժեքը: Փաստացի տոկոսադրույքը կարող է փոփոխվել կախված ՀՀ ԿԲ պաշտոնական կայքէջում հրապարակված փոխարժեքի մեծության փոփոխությունից:
9. Վարկի մայր գումարի նկատմամբ հաշվարկվող տոկոսագումարները վարկառուի ցանկությամբ կարող են վճարվել նաև վարկի արժույթով:

10. Արտարժույթով տրամադրվող վարկերի դեպքում արտարժույթի փոխարժեքի փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ վարկի մարումների վրա:

11. Տոկոսագումարների և վարկի գումարի մարումները ժամանակին չկատարելու դեպքում գրավադրված գույքը և/կամ դրամական միջոցները կարող են օրենքով սահմանված կարգով բռնագանձվել, իսկ հաճախորդի մասին տեղեկատվությունը Բանկը առավելագույնը երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում է վարկային բյուրո, որտեղ ձևավորվում է հաճախորդի վարկային պատմությունը: Հաճախորդը իրավունք ունի վարկային բյուրոյից տարեկան մեկ անգամ անվճար ձեռք բերել իր վարկային պատմությունը:

12. Վատ վարկային պատմությունը կարող է խոչընդոտել հաճախորդին՝ ապագայում վարկ ստանալու համար:

13. Հաճախորդի կողմից պարտավորությունների չկատարման դեպքում գրավի հաշվին պարտավորությունները մարելիս գրավը բավարար չլինելու դեպքում հնարավոր է պարտավորությունների մարում հաճախորդի այլ գույքի հաշվին:

14. Ժամկետանց պարտավորությունները կատարելու դեպքում մարումներն իրականացվում են հետևյալ հերթականությամբ՝ գումարի բռնագանձման ուղղված ծախսեր, այդ թվում դատական ծախսեր (առկայության դեպքում), տոկոսների տուժանք, վարկի մայր գումարի տուժանք, տոկոսներ, սպասարկման վճար և միջնորդավճարներ /առկայության դեպքում/ և վարկի գումար: Վարկատուն իրավունք ունի ցանկացած ժամանակ միակողմանիորեն փոփոխելու սույն կետում նշված մարումների հերթականությունը:

15. Կողմերի միջև ծագած վեճերը կարող են լուծվել դատական կարգով կամ ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով («ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով), հասցե՝ 0010 ք. երևան, Մ. խորենացու փող. 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն 7-րդ հարկ, էլ. փոստ՝ info@fsm.am, հեռախոս՝ (+37460) 70 11 11, ֆաքս՝ (+37410) 58 24 21: Ընդ որում, եթե գույքային պահանջի չափը չի գերազանցում 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, ապա ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները չեն կարող վիճարկվել Բանկի կողմից:

16. Բանկը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է «ճանաչիր քո հաճախորդին» սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ տեղեկություններ:

17. Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (FATCA) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն Բանկը հաճախորդի ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է լրացուցիչ տեղեկություններ հավաքագրել:

18. Հաճախորդը իրավունք ունի Բանկի հետ հաղորդակցվել իր նախընտրած տարբերակով՝ էլ. փոստ կամ փոստային կապ: Էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումը ամենահարմարավետն է: Այն հասանելի է 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկերից և ապահովում է գաղտնիություն:

19. Վարկային պայմանագրի գործողության ընթացքում քաղվածքների, դրանց կրկնօրինակների, տեղեկանքների տրամադրման պայմաններին կարող եք տեղեկանալ հետևյալ հղմամբ՝ Սակագներ:

20. Բանկի մասնաճյուղերի և բանկոմատների ցանկին, վերջիններիս գործունեության հասցեներին և աշխատանքային ժամերին կարող եք ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ [Մասնաճյուղեր և բանկոմատներ](#):

21. Բանկի կողմից հեռավար սպասարկումն իրականացվում է [IDBanking.am](#) առցանց համակարգի և [Idram](#) բջջային հավելվածի միջոցով: Բանկի հեռավար սպասարկման ծառայությունների մատուցման կարգն ու պայմանները ներկայացված են «Հեռավար բանկային ծառայությունների մատուցման հրապարակային պայմաններում»:

ՈՒՃԱԴՐՈՒԹՅՈՒՆ. ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՄԿՎՈՒՄ Է ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ